ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱԽԱՔԱԾՈՅ

ԲՈՐՈՑԿԱՆ, ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ, ԳԱՏՄԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ,

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ԵՒԱՅԼ ԳԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻԱՅ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎԷՊԵՐ, ՄԱՆՐԱՎԷՊԵՐ, ԶՈՒԱՐՃԱԼԻ ԽԱՂԵՐ

Է. ՀԱՏՈՐ - ՏԵՏՐ 14

1888

عارف نظارت جليلهسنك نومرو ١٦٩ سنه ٩٩ صفر ١٢ رخصت نامهسيله طبع اولنمشدر

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

ՆՇԱՆ Կ. ՊԼՐՊԼՐԵԱՆ

ՏԵՏՐ 14 1888 ՀԱՏՈՐ Է·

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

"Բուբաստանի,, երկրորդ վիճակահանութիւնը մինչեւ ցայսօր չետաձգելուս պատճառն ոչ այլ ինչ էր, այլ միայն 100 վճարող բաժանորդ չ'ուենալնիս, բայց միշտ կողմանէ ալ վճարող Մեծ. բաժանորդաց բախանձանաց այլ եւս դիմանալու անկարող լինելով՝ ներկայիս կը յայտարարենք թէ մինչեւ Օգոստ. 20, քանի վճարող բաժանորդ ունենանք, նոյնիսկ վրայ մինչեւ 100 թիւ "Բուբաստանի,, բաժին աշխատելով պիտի կատարուի վիճակահանութիւնը:

Ուստի կը խնդրենք մեր ազնիւ բաժանորդներէն ամենք որ չեն վճարած, բարեհաճին մինչեւ Օգոստ. 20 վճարել:

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Նեղիչ օր մ'էր ամառնային ,
Հրատապ արեւն կ'տարածէր ,
Ճառագայթներ իւր ջերմագին՝
Բոլոր գիւղն կարծես կ'այրէր :

Կէս օրն հասեր էր արդարեւ ,
Երբ ես նստայ միայնակ ·
Սաղարթագեղ ծառոց միջեւ՝
Ի մօտակայ անտառակ :

Կ'մտածէի գարնանային՝
Օրերու որք սահած են ,
Իբրեւ ասուպ վառ յուսային՝
Որ մարդկային աչք խտխտդեն :

Ցայնժամ էինք քանի՛ զուարթ ,
Մէջ անտառաց եւ պարտիզի ·
Քանի՛ բօշնած ենք եւ արդ
Իբր ծաղիկներ աճչրդի :

Անհա ձայն մը մեծ ի հեռուստ ,
Փոքր առ փոքր մօտենար ,
Ջոր կարծեցի ես ի վերուստ
Գոգցես տրտունջ կ'բառնար :

Ցանկարծ տեսայ երկու աղջիկ
Որոց դէմքըն կը փայլէր ,
Ելեն նոքա խիստ սիրունիկ ,
Իրենց քալուածք նամանայն չ'էր :

Երբ մօտեցան՝ նոքա տեսայ
Որ մին նազիւ տարբերէր ,
Միւսեն որ քոյր կ'անուանէր
Եւ իրմէ ալ փոքրն է :

Դեղձան գանգուր իրենց մազեր ,
Գեղածիծաղ կապոյտ աչեր ·
Եւ վարդագոյն էին շրթներ՝
Բարձր հասակ , բարակ մէջքեր :

Այս աղջիկներ իրենց գլխուն
Կողովիկներ ունէին ,
Մին տրալով քայլ կ'փոխեր
Միւսն արագ էր ու տոկուն :

Կը տրտնջար մին ըսելով՝
Որչա՛փ ծանր է իմ կողով ,
Օգուտ չունին ինձ նով ու զով
Իսկ դուռ վազես խնդալով :

Ի՞նչպէս կ'ըլլայ որ դուն խայտաս՝
Մինչ ես քալեմ կաղալ ի կաղ ·
Եւ փոխանակ դժգոհելու ,
Կ'ըսես ճո՛ւփ ճո՛ւփ եւ ոչ ա՛խ :

Մինչ ես կուլամ դուն կը խնդաս ,
Ես դժգոհ եմ դուն գոհանաս ·
Մինչ ես կենամ դուն կը քալես՝
Ո՜հ , ի՞նչ է այս , ըսի՛ խնդրեմ :

Պօտար , զոյեր մինչ աղջիկն ,
Բոլոր խնդար , յառաջեր՝
Եւ վեր առներ կողովիկն ,
Որ իւր համար ծանր չէր :

Բայց տեսնելով որ իւր քոյրն ,
Բարկութենեն կը դողար ·
Ըսաւ , լսի՛ դուն ինձ , իմ քոյր
Լսի՛ իմ խօսքերն ու միտք առ :

Մինչ կողովիս ունիմ համով
Ես մի պտուղ յոյժ քաղցրիկ ·
Անօրմով ես կ'ըլլամ ուժով՝
Թերեւ կ'ըլլի իմ բեռնիկ :

Այս պտուղն է Համբերութիւն
Կենաց ծառին մէջ դրուած ,
Կեանք կ'տայ մեզ ու զօրութիւն
Երբ ծանր բեռներ ենք շալկեր :

Կ'ուզես բեռանդ թեթեւութիւն ,
Տրտունջ զանգանտ ի բաց դող ,
Ունիր միայն համբերութիւն
Տե՛ս թէ ինչպես կ'ըլլաս գոհ :

Զմիւռնիա ՀԱՅՈՒՀԻՆ

ՀԵՆՆԵԼՈՒ ՁԻՆ

Պատերազմի ատեն, ձիաւորաց զօրաբաժնին մը մեծ գիւղի մը մէջ բանակեր էր։ Բուր անուն ձիավաճառ մը, ձիերը վոխանակելով չի գոհանալով, երբեմն ալ կը գողնար, և գիշեր մը զօրաբաժնին ամենէն գեղեցիկ ձիերէն մին գողցաւ ու անտառը պահեց։ Երբ ձիաւորները մեկնեցան, գողցած ձիուն վրայ հեծաւ և հեռաւոր քաղաք մը գընաց որ զայն ծախէ։

Երբ քաղքին մօտ հասաւ, բայց չի համարձակելով մէջէն անցնիլ, ուղեց եվերքէն երթալ։ Պատնէշին անկիւնը դարձած միջոցին, վիշապ զօրաց գունդ մը տեսաւ, որոնք փորձի պիտի ակսէին։ Փողը զարնուածին պէս, Բուրի հեծած ձին գլուխը առաւ գնաց և ձիավաճառը չկրցաւ բռնել զայն։ Ձանբուն եվերքի խրամէն ցատկեց, վիշապ զօրաց գունդին մէջ գնաց և անոնց կարգովը կեցաւ, և փորին ձայնին ու հրամանին համեմաստ, բոլոր պէտք եղած շարժուձևներն ըրաւ։ Բուր, որ այս արշաւանքի միջոցին գլխարկը կորուսեր էր, վախէն ինքնիրմէն ելեր է։ Թամբին կպեր էր և խոշոր քրտինքներ կը թափեր։ Մինչդեռ միւս զինուորներն խնդալէ կը մարէին տեսնելով այս ձիաւորին դողդղալը։

Երբ փորձը լմնցաւ, զինուորներն ու պաշտօնակալները անոր շուրջը հաւաքուեցան և հրամանատարն, կատածանօք երեսը նայելով՝ ըսաւ,

« Այս ձին մատաղ, գեղեցիկ և խիստ լաւ կրթուած է, և զօրաբաժնի ձի մը ըլլալ կ'երեւի, ի՞նչպէս եղեր է որ այս ձին ձեր ձեռքն ինկեր է։ »

Բուր պատասխանեց թէ դներ է, բայց որմէ՞ ըլլալը չէր գիտեր։ Իւր վրանումը, վախուստի պատասխաններն պատճառ եղան որ ձերբակալուեցաւ, և խուզարկութիւններ ըլլալով՝ շուտով հասկցաւ որ այն ձին գողցած էր։ և իւր պատիժը կրեց։

ՁԻՈՒՆ ԳԱՄԸ

Գիւղացի մը իր ձին համեստեց որ քաղաք երթայ։ Այն պահուն նչմարեց որ ձիուն ոտքի պայտերուն գամերէն մին պակաս էր, բայց մտքէն ըսաւ։

« Գամ մ'աւելի կամ պակաս՝ հոգ չէ։ »

Վերջը ձիուն վրայ ցատկեց ու ճամբայ ելաւ։

Ճանբուն կէսը չ'եկած՝ ձիուն պայտը ինկաւ։

« Եթէ մօտերը պայտառ մ'ըլլար, ըսաւ գիւղացին, ձիուս պայտը դնել կուտայի, բայց քանի որ չկայ, ձիս մնացեալ երեք պայտով ալ կրնայ ճամբան շարունակել։ »

Սակայն ճամբան խիստ քարոտ ըլլալով՝ ձիուն ոտքն արիւնեցաւ և ոկսաւ կաղալ։ Քիչ մը վերջը, մացառի մը ետին պահուըտած երկու աւազակ ճամբուն մէջ տեղը վազեցին՝ գիւղացին կողոպտելու համար։ Ձին կաղ ըլլալուն չկրցաւ փախչիլ, որով աւազակներն ալ իր պարկն ու ձին առին։

« Որո՞ւ մտքէն կ'անցնէր, գոչեց այն ատեն գիւղացին թէ՝ մէկ գամ մը պակաս ըլլալուն ձիս պիտի կորուսէի։ »

ԱՄԷՆ ՓԱՑՂՈՒՆ ՈՍԿԻ Չ'Է

(Շարունակութիւն տես թիւ 13)

— Անշուշտ, մինչեւ որ Նօրմանտիա տանինք զինքը, վասն զի դղեկին համար սքանչելի պահապան շուն մը կրնայ ըլլալ։

— Ատոր չ'է չեմ ըսեր ... կարծեմ թէ դռնապան ըլլալու յարմար է, ըսաւ Օքթաւ հեգնօրէն։

— Ահա յատկութիւն մը, զոր քու Ռօմէօդ չ'ունի։

Տղան այնպէս չարժուեմ մ'ըրաւ, որ կրնար սապէս թարգմանուիլ.

— Միշտ նոյն խելքին վրայ ես ... Ի'նչ որ է, կը յուսամ թէ ապագայն քեզ պիտի ուղղէ։

Այս միջոցին Արամազդ համեստօրէն դրան առջեւ կեցած՝ պաղատական աչօք կը նայէր Օքթաւի ու Ռօմէօի։ Խեղճ կենդանին նոցա դէմքէն կը հասկնար որ երկու թշնամեաց դէմ կը գտնուէր։

Պ. Տըլաքրուա անմիջապէս Արամազդայ զարդարանքն ամբողջացնել տուաւ. ապա գեղեցիկ կարկանդակ մը տուին չան, որ անմիջապէս լափեց զայն ախորժանօք։

Խեղճ Արամազդ. կ'երեւնար որ իւր

« Շիտակը ատի նախանձելի յատկութիւն մը չ'է։ »

Ապա յարեց.

« Միայն սըւոր կը ցաւիմ որ Ռօմէօ ու ես սիրտ պարտաւորինք, մինչեւ որ դիւղ երթանք, պարոն Արամազդի հետ ընկերութիւն ընել... Բայց կարելի չ'է՞ որ, մինչեւ այն ատեն, ախոռը դնենք զայն։

— Ամենեւին, կ'ուզեմ որ նա մեր բարեկամն ըլլայ։

— Իմ բարեկամն չի կրնար ըլլալ, վասն զի անդիի ծայր տգեղ ու դռեհիկ է։

— Միշտ նոյն խելքին վրայ ես ... Ի'նչ որ է, կը յուսամ թէ ապագայն քեզ պիտի ուղղէ։

Այս միջոցին Արամազդ համեստօրէն դրան առջեւ կեցած՝ պաղատական աչօք կը նայէր Օքթաւի ու Ռօմէօի։ Խեղճ կենդանին նոցա դէմքէն կը հասկնար որ երկու թշնամեաց դէմ կը գտնուէր։

Պ. Տըլաքրուա անմիջապէս Արամազդայ զարդարանքն ամբողջացնել տուաւ. ապա գեղեցիկ կարկանդակ մը տուին չան, որ անմիջապէս լափեց զայն ախորժանօք։

Խեղճ Արամազդ. կ'երեւնար որ իւր վերջին կերակուրը առնուաղն 48 ժամ ի վեր մարսած էր։

Այն օրէն սկսեալ, տանը մէջ տեղաւորուեցաւ և ամէն ճիգ ըրաւ ախորժելի ըլլալու ոչ միայն իւր նոր տէրոջն, այլ և նոցա բարեկամներուն։

Միայն Օքթաւ և Ռօմէօ չ'ուզեցին անոր բարեկամն ըլլալ։

Արամազդ դերագոյն խելք մը և չատ լուրջ բնաւորութիւն մ'ունէր։ Նա այն քաջ շուներէն մին էր, որք կարող են խեղճ կուրի մը անձնուէր ըլլալ, անկէ

չի բաժնուիլ, ժամերով անոր քով նըստիլ՝ բերաննին փայտէ պնակ մը բռնած։ Կարող էր նա տօմիկա խաղալ, թմբուկ զարնել, զինավարժուԹիւն ընել սովրիլ, և ուրիշ սոնոց նման հաղարաւմէկ կընճռուռ բաներ. բայց սա ատոր է Թէ մի միայն իւր սիրոջն հաճելի ըլլալու համար կրնար այս բաներուն զիջանիլ, և ոչ երբեք իւր խելացիուԹիւնն ցուցնելու։ Իսկ Ռօմէօ իւր գեղեցկուԹեանը վրայ պարծենցող ապուշին մէկն էր, և, իւր սիրոջը պէս, սոսրին կարգի շուն մը կը համարէր զԱրամազդ։ Սակայն երբեք չէր համարձակեր զայն ուղղակի իրեն հաղորդելու, համոզուած ըլլալով որ Արամազդ կարող էր մէկ մը լսածնելով խեղդել զինքը։

Արամազդ չի վհատեցաւ, և։ մտածելով որ գուցէ իւր լուրջ կերպարանքն էր որ զինքն անախորժ կ'ընէր անոնց, ակաւ ցատկել, վազել, ուրախուԹեան ցոյցեր ընել, անանկ որ շուրջը գտնուած կարասիները կը չարժէին։

Բայց ի զո՞ւր. ՕքԹաւ անվիջապէս Ռօմէօն գիրկը կ'առնէր և կը հեռանար՝ ըսելով.

« Սա այլանդակ արամազդը ի՛նչ անտանելի կենդանի է։ »

Գարնան առաջին օրերն էին, և Արամազդ կ'երթար պատշգամը պտոյտ մ'ընելով՝ մխիԹարուելու։

ՎօլԹէռի գետափի տուներէն աքանչելի տեսարան մ'ունէին. դիմացը Լուվրի պալատը, գետին և գետափանց յարատեւ երԹեւեկն, կաղամախեաց այն քանչելի վարագոյրն, որ, Սէնի երկու կողմը ձգուած է, Բօն-Ռուայեալի մօտերը, անցորդներն հովանաւորելու համար։ Ձախ կողմը նաւային դպրոցն, Թիւլերիի պարտէզն՝ իւր դարեւոր ծառերու անտառակոիւղ։ Ի՛նչ հեռուն Շանզ-Էլիզէ և Բաստիի բարձրաւանդակներն։ Ալ կողմը՝ ՍիԹէի կղզին և Նօթր-Տամի աշտարակները։ Ամէն կողմէ հետեւակներով ու կառքերով լի կամուրջներ։

Միւռմաղդ զատնք բոլոր կը դիտէր ճշմարիտ արուեստագէտի մը հիացմամբ։ Միայն Թէ ատեն ատեն իւր խորհրդածուԹիւններէն ընդմիջելով կը հաչէր դատարկասուն դպրոցականաց ոմանց դէմ, որոնք իրարու հետեւէ գրքեր կը նետէին, կամ սայլորդաց դէմ, որք իրենց ձիերը կը ծեծէին ու կը հայհոյէին։

Շատ անդամ ՕքԹաւ Ռօմէօի հետ վրայ կուգար և զինքը պատշգամէն կը վռընտէր՝ ըսելով.

« Կորի՛ր սկեց. շուն կը հոտիս։ »

Ան ատեն խեղճ Արամազդ առանց ձայն հանելու կը քաշուէր։

Գիւղ երԹալու ժամանակն եկաւ։

Պ. Տըլաքրուա, Նօրմանտիոյ մէջ, Քաէնէն քանի մը վարսախ հեռու, դըղեակ մ'ունէր, և իւր կինը, ՕքԹաւը, Ռօմէօն ու Արամազդը հոն առնելու մտադիր էր։

Բոլոր անտուհիները գոյուէր, կահերը շարուեր էին, և ծառայները վերջին հրամանի կ'սպասէին։

« Հոս եկէ՛ք, Արամազդ և Ռօմէօ, « գոչեց Պ. Տըլաքրուա, որու որու ձեռքը երկու ցուկապահ և երկայն չղԹայ մը կար, որով երկու շուները պիտի զարնէր։

Ռօմէօ սիրոջը ձայնը լսելուն պէս՝ վազեց. բայց շատ դժուարուԹիւն քաշեցին Արամազդը բռնելու։։։ Բայց զայն բռնելը բան մը չէր, պէտք էր կեցնել, և ծանրաբարոյն Արամազդ ակռայներուն մէջէն կը մռնչար և անանկ մը կը ցատկռտէր որ, շուտով չաջողեցաւ զինքն կապելու աշխատողաց ձեռքէն փախչիլ։

Փախած-ին պէս՝ բնակարանը մնաւ։

Օքթաւ քթին տակէն խնդաց, տեսնելով որ խելացին Արամազդ անամօթաբար խոյս կուտար իւր չնական պարտաւորութիւններէն։

« Գետինն անցնելու կենդանի՛, դոչէց Պ. Տըլաքրուա· բռնեցէ՛ք սա. չո՛ւա, երկաթուղւոյն չի պիտի հասնինք։ »

Այս հրամանն անօգուտ էր· վասն զի նոյն պահուն Արամազդ եկաւ, ակառաներովը տիրոջը վոքրիկ պայուսակը բըռնած, զոր աէրը նորա առջեւ լեցուցեր էր։

Հիացմամբ ընդունեցին զինքը։

« Այո՛, աղնիւ չո՛ւնս, իրաւունք ունիս, զայն պիտի մոռնայի, և քու յիշողութիւնդ ինձմէ աւելի է, դոչէց Պ. Տըլաքրուա՝ կենդանին վայփայելով։ »

Սալա Ռօմէօին դառնալով յարեց

« Բեզի պէսներուն գործը չէ, վայլո՛ւն տխմար, ասանկ ծառայութիւններ մատուցանել տէրերուդ։ »

Օքթաւ նուաստացեալ զղայ ինքզինքը յանձն իւր սիրականին։

Յաջորդ օրը ամէն մարդ տեղաւորուած էր դղեկին մէջ, և Ռօմէօ, նախընթաց տարիներուն պէս, նորէն պարտէզին ու դղեկին մէջ կը բնակէր։ Արամազդ ագարակ ղրկուեր էր։

Երկու չանց այս բաժանումն մեծ հաճոյք պատճառեց Օքթաւի։ վերջապէս ասանկով ազատեր էր Արամազդէն, որու ժողովրդային բնաւորութիւնը և քան զիս անախորժ կըլլար իրեն։ Տակաւին ոխ ունէր անոր դէմ որ Ռօմէօն աւելի խելացի ցուցուցեր էր ինքզինքը, բայց չէր համարձակեր խոստովանիլ։

Ժան, ագարակապանին 15 տարեկան տղան, անվիջապէս Արամազդայ տերտ բարեկամն եղաւ։ Առաջին անգամ տեսնելուն հիացեր էր նորա ոյժին և խելացի դէմքին։ Կենդանին ալ, տեսնելով որ սիրով կ'ընդունի զինքը, սկսեր էր զայն սիրել, և կարելի Եղածին չափ քիչ կը բաժնուէր իւր նոր բարեկամէն։ Քիչ քիչ սկսան կերակուրնին ալ միասին ուտել։ Արամազդ անոր առջեւ կը նստէր, թաթին մէկը կը դնէր նորա ծունգին, վառվռուն աչօք կը դիտէր իւր բաժինն եղող հացի պատառներն, զորս ճանճ մը կլլելու պէս կուլ կուտար։

Հետեւաբար ամէն յարաբերութիւն դադրած էր Ռօմէօի և Արամազդայ միջեւ՝ դղեակ գալերնուն ի վեր· դուն ուրեք իրարու կը պատահէին, և պատահած աեւնին ալ Ռօմէօ գլուխն անդին կը դարձնէր, որպէս զի չի ստիպուի բարեկամական բարեւ մը տալ իւր նախկին ընկերոջն։

Օքթաւ Արամազդայ վրայ չէր մտածէր խակ, և եթէ երբեմն տեսնէր զայն ժանի հետեւէն՝ ինքնիրեն կ'ըսէր։

« Սա երկու չինականները նայեցէ՛ք· կարծես իրարու համար ստեղծուեր են։ »

Պէտք է ըսել որ ժան մեծ ու հուժկու տղայ մ'էր, բայց ամենեւին վայելչութիւն չ'ունէր։ Իւր անկեղծ ու անվեհեր դէմքն սակայն ախորժելի էր տեսնողին, և եթէ Օքթաւ աւելի խելացի ըլլար, եթէ չ'ատէր ինչ որ յարաբերութեան դեղեցիկ չէր, անշուշտ իւր անհամ տղայ մը չ'պիտի նկատէր զայն։

Օքթաւ զինքն ու Արամազդը անպատճառ վռնտել կուտար ագարակէն, եթէ իւր ձեռքն ըլլար։

Բայց Օքթաւ, թէեւ յամառ, քիչ առիթներն հասողութեան հորը դիտողութեանցն ճշմարիտ ըլլալուն։

Շարունակելի

Թ Ր Ա Զ Ո Ւ Կ

Ձկանց մէջ խիստ յարգի ու զարմանալի է Թրաճուկը, որ թուրի ձեւով երկայն ոսկորի նման քիթը՝ թէ ձեւով և թէ դործածութեամբ թուրի նմանութիւն ունենալով՝ բոլոր ազգերը այս անունով կը կոչեն։ Գլխուն վերի ծնօտը թրաձեւ քիթով մը կը վերջանայ, բերանը ակռայ չունի, ականջները ութ բաժին ունին, և մարմինը դլանաձեւ կըոր է՝ առանց թեփի։ Թրաճուկը երկու տեսակի կը բաժնուի, հասարակ Թրաճուկ և առաջաստաւոր Թրաճուկ։

Հասարակ Թրաճկան բնակութիւնը կը կարծուի թէ յատկապէս Միջերկրական ծովն է, թէպէտ երբեմն Ադրանտեան ովկիանոսին մէջն ալ կ'ըլլայ, և Եւրոպայի ծովեզերքները մինչեւ Պալտիկեան ծովը ու Ամերիկի ծովեզերքները մինչեւ Դըլուխ Բարեյուսոյ գտնուած են, ինչպէս նաև Պոսֆորի նեղուցին մէջ՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներուն մէջ հաբիւրաւոր կ'որսան։

Այս ձուկը երբեմն ինչուան 20 ոտնաչափէն աւելի երկայնութիւն կունենայ. մեծութեան համեմատ է նաև իր ոյժը և չատակերութիւնը. ուստի որևիցէ ծովային կենդանեաց ու ձկանց վրայ կը յարձակի և իւր սոսկալի քիթովը զարնելն ու սպաննելը մէկ կ'ընէ։ Թրաճկան չարժումնքը խիստ արագ է և ահռոյժակը խիստ անյագ։ Կ'ըսուի թէ Դոն ձկան յատկապէս թշնամին է, ինչպէս որ ոչխարը գայլ մը տեսնելուն կը սարսափի, այնպէս ալ Դոն ձուկը Թրաճուկը տեսնելուն պէս կը դողայ։ Նոյնպէս կէտը, մեծ վախ ունի նեղութիւն կը կրէ Թրաճկան երեսէն, մանաւանդ երբ երկու հատ լինին։ Նաւապետաք կը պատմեն թէ՝ կէտը Թրաճկան մը հանդիպելուն՝ կը նայի որ փախչելով ազատի, իսկ երբ կը տեսնէ թէ անհնարին է ազատիլ, կը դառնայ որ Թրաճկան հետ իր պոչովը պատերազմի։ Իսկ Թրաճուկը իրեն սոսկալի արագութեամբ ամէն կողմէն յարձակելով՝ երբեմն ալ նեաի նման կռնակը ցատկելով՝ չարաչար կը վիրաւորէ զանի, այնպէս որ կէտին չորս կողմի ջրերը բոլոր արիւնովը կը կարմրի։ Տեսնելու արժանի է, կ'ըսեն այն միջոցին կէտին ցուցուցած կատաղութիւնը. ամէն մէկ անգամուն որ որ պոչովը ջրին զարնէ՝ թնդանօթի ձայնին նման արձագանգ կուտայ։ Բայց այսպիսի կռիւներու մէջ՝ Թրաճուկը աւելի կը վնասուի քան թէ կը վնասէ. վասն զի որչափ ալ ղօրաւոր ըլլայ իւր թուրը՝ կէտին կաշին հազիւ թէ կը ծակէ։ Երկրորդ տեսակը [կամ առաջաստաւոր Թրաճուկը, ձկանց մէջ ամէնէն վեհանձը, ամենէն ղօրաւորն է։ Աստր մեծ տեսակին երկայնութիւնը տասնհինգ, քսան և երբեմն մինչեւ երեսուն ոտնաչափ կ'ըլլայ, իսկ քթին ոսկորը մարմինին երրորդ մասին չափ է. այս ահագին զէնքովը, այժովը, ճարպիկ ու յանդուգն բնաւորութեամբը կէտերու, Շանաձկանց հետ ալ կը պատերազմի ու կը յաղթէ, և եթէ բնութեամբ անոնց նման կատաղի ըլլար՝ Ովկիանոսին ամէնէն ահագին դազանը կը լինէր. բայց շատ վեհանձն է, և մինչեւ որ անօթութենէ ստիպուի չնեղուի՝ ուրիշ ձկանց և մանաւանդ մարդոց վրայ չյարձակիր, ոմանք ալ միայն ծովու խոտերով կ'ապրին, այս բանիս համար [ստիպտ անուանի բնապատումը առիւծ ծովու կը կոչէ այս ձուկը։ Այս հանդարտ բնաւորութիւնին աւելի կ'երեւայ իրենց ընկերասիրութեամբը, այնպէս որ միշտ բազմութեամբ կը թափառին և իրարմէ չեն զատուիր,



ՀԱՍԱՐԱԿ ԹՐՉՈՒՆ

իրենց ուժին վրայ վստահելով կը ըղձան, և ուրիշ որ և իցէ գազանի ճանապարհ տալու համար իրենց ճամբէն չեն խոտորիր։ Թէպէտ և իրենք ուրիշին վնաս չեն ուզեր, բայց իրենց պատիւն ալ կ'ուզեն որ պահուի, և թէ որ յանկարծ կէտ մը իրենց ընկերութիւնը խռովէ՝ ամենայն քաջութեամբ կը կռուին, չնայելով որ կէտին պոչին մէյն վնասահին, որոյ մէկ հարուածը բաւական է զիրենք ընտորուն կողմը արծաթագոյն է, վրան մթագոյն ու թեփով պատած, ու երկայնութիւնը 8-10 ոտքէն աւելի չըլլար, իրեն վերի ու վարի ծամելիքը և քիմքը նուրբ ակռաներով պատած է, թրին երկայնութիւնը 2.3 ոտք է՝ նեղ ու սրածայր։ Այսոր կարգէ դուրս յատկութիւնը կռնակի լուղային է, որ երկնագոյն ու մութ կարմիր բծերով կաշի մ'է, ծոծրակէն ինչուան պոչը, ասիկայ



ԱՌԱԳԱՍՏԱՒՈՐ ԹՐԱՁՈՒԿ

պաննելու. ուստի ամենայն զգուշութեամբ անոր աչ ու ձախ կողմը կը պահարեն՝ ու ծովուն տակ իջնելով և օդին մէջ ցատկելով ամէն կողմէն զանի կը վիրաւորեն, այնպէս որ կէտը միշտ կը յաղթուի։ Նոյնպէս վարպետութեամբ կը յաղթէ կոկորդիլոսներու, ջրին խորը իջնելով՝ անոր փորը կը պատռէ։

Երկրորդ պատկերին առաջաստաւոր Թրաձկան ամենէն փոքր տեսակն է։ ջրին մէջ կը բարձրանայ ու կը կըրնայ և աւազաստի տեղ կը գործածէ։ Այս ձուկը ամենեւին մրրկէ չվախնար, այլ այն առեն աւելի ծովուն երեսը կ'երեւնայ ու մանր ձուկեր կ'որսայ։ Ասոր համար նաւաստիք փոթորկի նշան կը համարին։ Քանի որ Թրաձուկը փոքր է, սիսը համեղ կը լինի, բայց մեծնալով չատ կը դիրնայ ու սաստիկ լուղատ լինելուն դժուարաւ կը մարսուի, այս ձուկը

որսալը չատ դժուար է, վասն զի իւր արագ ու ճարպիկ չարժուածքովը նիզակներէ չուտով կ'ազատի, իսկ ուռկանի մէջ որ փակուի՝ բոլորը կը փշկտէ ու կը փախչի։

Այս ձուկը ընդհանրապէս բնական մահուամբ չմեռնիր։ Սա ալ իւր թշնամին ունի, որ որչափ խեղճ ու չնչին բան մ'է այնչափ աւելի անգութ է. ասի՝ պզտիկ միջատ մ'է, որ կ'երթայ Թրաձկան լուղակին կամ ականջին և կամ ուրիշ մէկ փափուկ տեղը կը կպչի, ու կ'սկսի անոր մարմինը ողջ ողջ կրծել. խեղճ ձկան վրայ այս անընդհատ տանջանքէն կատաղութիւն մը կուգայ, կը սկսի կայծակի նման արագ լողալ, ջրէն դուրս ցատկել ու ծովուն խորը իջնել, ու ինքզինքը նաւերուն ու ժայռերուն զարնել, որպէս զի այն տանջանքէն ազատի. երբեմն ալ ինքզինքը ցամաք նետելով և սաստիկ տանջուելով կը մեռնի, և տեսնողը չատ անգամ չիմանար անոր պատճառը։

Թրանձկանց վրայ չատ զարմանալի պատմութիւններ կան, բայց մեք միայն մի քանի հատն առնելով կը ներկայացնէք մեր ընթերցողաց։

Արեւելեան Հնդկաստանի պատերազմական նաւու մը նաւապետն՝ տաղտասատաւոր Թրաձկան մը սքանչելի ուժին վրայով զարմանալի պատմութիւն մը կ'ընէ։ Թրաձուկ մը իր Թուրովը նաւապետին տակի նաւը այնպէս ծակեր է՝ որ Թուրը բոլորովին ներս հրելով նաւին մէջի կողմէն հաներ է, բայց ինքն ալ այն սաստիկ զարնուածքովը մեռեր է։ Սոյն նաւուն տախտակը Թուրը մէջը Թաղուած կտրեր են, ու Անգղիոյ Թանգարանին մէջ պահուած է։

Ամերիկայի միացեալ նահանգներէն նաւ մը Խաղաղական ծովը կէտի որսորդութեան դարձած տեն, 1826-27ին, նաւին տակը դրսի կողմէն Թուրի մը նշան հրեւցաւ։ Ասիկա քննելով դտան որ Թուրը նաւուն տակը պատած պղինձը ծակեր՝ անկից երեք մատ հաստութեամբ տախտակէն անցեր և 12 մատ հաստութեամբ ամուր գերան մը ծակեր ու նաւուն ներքին կողմը պատած տախտակէն անցնելով իւղի մը տակառի մը մէջ մխուած էր. տակառը տակաւին իւր տեղը անշարժ կեցած էր Թուրին ծայրը իր մէջը, և կաթիլ մը իւղ չէր վազած։»

ԵՐԿՈՒ ԿԻՏՈՐԱՔ

(Շար. տես տետր 13)

Կէտ մը տեսնուածին պէս, նաւուն մէջ ի ծո՛վ ի ծո՛վ կը գոչեն, և ամէն ոք իւր մակոյկը կը նետուի։ Սովորաբար մէկ մակուկի մէջ 6 հոգի կ'ըլլայ, երբեմն ալ եօթն։ Մինչեւ որ կէտին մօտենան, ամէն ոք կը թիավարէ, բայց ի նաւապետէն, որ մակոյկն կ'ուղղէ մեծ ղեկի մը միջոցաւ. բայց երբ մօտենան, երեքժանեւորն յառաջ կ'անցնի, մինչդեռ ուրիշ նաւաստի մը կը պարտաւորի երեքժանիին կապուած չուանին հակելու։ Կանխաւ մակուկին մէջ պատրաստուած և կարգի դրուած են երեքժանի, վեց նիզակ, տապարներ, և այլն։

20 ին այնքան ցուրտ էր որ, ծովն գրեթէ սմբողջապէս առեցաւ։ Սակայն պէտք չէ կարծել թէ այն առիւծներն այն սառուցեալ կողմերը կէտեր չկային։ Ուրիշ ին նաւեր ալ կը նաւէին այն կողմերն, և միւս օրն, երբ Յովնան սառերուն մէջ մտաւ՝ համպուրկեան նա-

ւու մը հետ, որպէս զի երթայ սառուցի ահագին կղզիի մը կապուի, Մարթէն երեսուն նաւ համրեց, որք այսպէս կապուած էին։ Երբ սառոյցներուն մէջ մնան, մեր նաւարկուք տեսակ մը նաւահանգիստ կարծեցին զայն, բայց իրենք իսկ կը խոստովանին թէ այս ըրածնին անխոհեմութիւն էր, վասն զի կրնար ըլլալ որ չորս կողմէ սառերն բռնէին զիրենք։

Մայիս 30 ին՝ կէտի մը հնչելն լսեցին։ Մակոյկներն անմիջապէս սկսան հալածել զայն, և երբ թիերու զօրութեամբ մօտեցան կէտին, երեքժանեւորն ոտք ելաւ, երեքժանի մ'առաւ, նշան ըրաւ որ թիավարք կանգ առնուն, և երեքժանին նետեց։ Սպաննիչ պէնքն նետի նման ճեղքեց օդն և դնաց հսկայական կենդանւոյն մարմնոյն մէջ մնաւ՝ ականջներէն քիչ անդին։ Կէտն անմիջապէս ընկղմեցաւ և հետը տարաւ երեքժանին ու անոր չուանը։ Այնքան արագ կ'ընկղմէր որ, թէև չուանը գրեթէ բոլորովին ազատ թողած էին, սակայն մակուկին եզերքը մինչեւ ջուրը ծռած էր։ Մակուկին մէջ կ'ային քանի մը ծրար չուան, իւրաքանչիւրն 100 դրկաչափ երկայնութեամբ։ Յորչափ կէտըն կը խորասուզէր, չուանը կ'երկնցընէին, և երբ մակուկին մէջի չուաններն հատան, միւս մակոյկներէն առին։ Մակոյկն ամէն վայրկեան շրջելու վտանգի մէջ էր, և մարդ մը անդադար կը թըրջէր չուանին անցած տեղը, որպէս զի ուժով շփումէն չի բռնկի։

Այս միջոցին միւս մակոյկներն կը ջանային երթալ այն տեղն, ուր կը կարծէին թէ կէտը ջուրին երեսը պիտի ելլէր։ Սակայն ժամանակն կ'անցնէր և կենդանին չէր երեւնար։ Նաւարկուք զարմանօք չորս դին կը նայէին, երբ տեսան որ խել մը ծովային թռչուններ կը դառնային ու կը խոյանային. անմիջապէս դէպ ի այն կողմն վազեցին, և տեսան որ կէտն իւր չնչահաններէն արիւն կը ժայթքէր։ Ծովն կարմրեր էր։ Ահա՛ այն ատեն կ'սկսէր բուն վտանգն։

Մինչդեռ երեքժանիին չուանն բռնող մակոյկն չուանը քաշելով կը յառաջանար՝ միւս պոչէն հեռու կենալով, միւս մակոյկներն կէտին կուշտերուն կը մօտենային, և երեքժանեւորք իւրեանց նիզակներովն խոշոր վէրքեր կը բանային կենդանւոյն մարմնոյն վրայ, բայց միչտ կը չանային կենսական մասերուն զարնելու։ Կենդանին կ'երերար, պոչովն ալիքներ կը յարուցանէր և ուժգին կը փչէր. ընդ հուպ, արեան հոսմամբն տկարանալով՝ դադրեցաւ. ամբողջ մարմինն սկսաւ սառչել, նորա չղաձգային չարժումներն ծովն ամբոխեցին, գլուխը վեր առաւ, աչերն վերջին անգամ արեւուն լոյսը փնտռեցին, և մեռաւ։

Նաւարկուք յաղթական աղաղակ մը արձակեցին։ Իւրեանց որսն ջուրին երեսն կը տատանէր՝ կռնակը դէպ ի վար և փորը վեր։ Պոչը կտրեցին, զինքը կապեցին մակուկի մը, և ամէնքն ի միասին սկսան քաշել զայն Յովհաւ։

Որսին պիտի յաջորդէր ուրիշ տեսակ մը աշխատութիւն, այն է ջարդումն։ Կէտն չուաններով կապեցին ձախ կողմը պոչին դին դէպ ի յառաջակողմը։ Գլուխը մինչեւ նաւուն կէսը կը հասնէր։

Երկու մակոյկ միայն մնացին ծովը, և դացին կենդանւոյն միւս կողմը։ Իւրաքանչիւրին մէջ մարդ մը կար, որ կարթով մը մակոյկը նաւուն կը բռնէր. մէկ մ'ալ կաչիէ հագուստներով երեքժանեւոր մը. այս վերջին, որ մարդու մեծութեամբ դանակով մը ճարպը կը կարէր, կէտին վրայ կ'ելլէր և այնպէս կ'աշխա-

տէր։ Ջարդուելու դիւրացնելու համար՝ կէտն ջուրէն կը բարձրացնէին նաւէն կախուած մոխիրներու միջոցաւ։

Երեքժանեւորք սկսան նախ աչքերուն քովէն՝ դլխուն եռեւի մորթն հանել և խաշոր կտորն հանեցին, մէջտեղէն ծակ մը բացին, որպէս զի կայմէն կախուած չուանն անցնեն անկէց և վեր քաշուի։ Երբ առանձին կտորն նաւը դրին, հետզհետէ սկսան ուրիշ կտորներ ջարդել դէպ ի երկայնքը, որոնց իւրաքանչիւրն հետզհետէ նաւը կը քաշէին։

Նաւուն մէջ նաւասաիք կ՚առնէին և աւելի մանր կը ջարդէին զանոնք։ Ուրիշ նաւասաիներ ալ, սեղանի մը չուրջը նստած, խորխը ճարպէն կը զատէին։

Վերջապէս ուրիշ նաւասաի մը այս ճարպն մանր կտորներու կը բաժնէր և կը նետեր փայտեայ խողովակի մը մէջ, ուրկէ կ՚իջնէր նաւուն յատակը։ Հոն ուրիշ նաւասաիք կ՚առնուն և տակառներու մէջ կը լեցնէին։

Երբ կէտին մէկ կողմը ամբողջապէս ջարդուեցաւ՝ տապարով կարեցին ու նաւն հանեցին վերին ծնօտը, լեզուն կարեցին, ապա կենդանին դարձուցին և աչխատութիւնը շարունակեցին։

(Շարունակելի)

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ԵՒ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

ԳԼՈՒԽ Ե.

Սուրբ Յարութեան տաճարն

(Շարունակութիւն տես թիւ 11)

Ս. Գերեզմանին առաջին դուռը դէպ յարեւելս կը նայի։ Դրան անմիջապէս վրան Հայոց պատկերը կայ վոքրադիր, որ կը ներկայացնէ Քրիստոսի սուրբ Յարութիւնը, որոյ առջեւ մշտավառ կանթեղ մ՚ունինք կախուած։ Այս կանթեղին «Լուսաւորչայ կանթեղ» կ՚ըսուի։ Մեր պատկերին վրայ Յունաց մարմարիոնի վրայ քանդակուած պատկերն է, որոյ առջեւ ունին կանթեղ մը մշտավառ։ Յունաց պատկերի վրայ ալ Լա-

ՀՐԵՇՏԱԿԻ ՎԷՄ

տինաց պատկերը կայ նոյնպէս մշտավառ կանթեղով։

Ս. Գերեզմանին ճակատը և միանդամայն շուրջը կանթեղներ կախելու և վառելու, պատկերներ դնելու և ծաղիկներով զարդարելու, աշտանակներով մոմեր վառելու իրաւունքն մի միայն երեք աղդի, այն է՝ Հայոց, Յունաց և Լատինաց է. իսկ ներքին կողմը սոյն երեք աղդէն ի զատ Գպտիք ևս կանթեղ ունին։

Ի հնումն Ս. Գերեզմանը երկու պզտիկ խորշերու բաժնուած և ժայռի մը

մէջ փորուած էր և առաջինը երկրորդին իբր գաւթին էր, ուրկէ անցնելով երկրորդ խորը կը մանուէր, ուր տեղ կար մանակ Ս. Գերեզմանին հին և բնական ձեւն ալ այլափոխեց գեղեցիկ կերպիւ զարդարելու համար, և ապա մինչեւ



Ս. ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱՅԻ ԳՄԲԷԹԸ

քարի մէջ փորուած մուրի նման փոս մի, որ վիմափոր կամար մ'ունէր։ Հեղինէ Թագուհին տաճարը չինած ժա-

1808 Թուականին քանի մը տեսակ ձեւերու մտնելէն յետոյ, նոյն Թուականին այրեցաւ Ս. Յարութեան տաճարին ներ-

քին կողմն, որ ըստ մեծի մասին վայտաչէն էր, որով Ս. Գերեզմանն ևս քիչ չատ վնասեցաւ։ Նոյն թուականին Բ. Դռնէն Յունաց ազգին, Ս. Յարութեան տաճարի նորոգութեան համար արտօնութիւն տրուեցաւ։ Ատոնք առանց ձևը փոխելու Ս. Գերեզմանն ևս նորոգելով զարդարեցին, մարմարեայ և կմեայ քանդակուած քարերով և յունական արձանագրութեամբ։ Հրդեհէն առաջ Ս. Գերեզմանին վրայ հայկական դրեր ու արձանագրութիւններ կային։

Դռնէն ներս Ս. Գերեզմանի առաջին մասն է, որոյ կեդրոնը մարմարեայ սիւնաձեւ քար մը կայ կանգուն, որ «Հրեշտակի վէմ» կը կոչուի։ Այս տեղն Ս. Աւետարանի յանուցից ըսած տեղն է, ուր կանգնած էր հրեշտակին մին սպիտակ հագած։

Այս մատուռին մէջ 15 հատ մշտավառ կանթեղներ կան երեք կարգ չարաններու վրայ կախուած։ Ձախ կողմի կարգին 4 հատը Հայոցն է և հինգերորդը Պօղոսց. միջին կարգինը Լատինաց, և աջ կողմի կարգն ալ Յունաց 5 ական հատ։ Ներսը դրան անմիջապէս վրան, Յունաց՝ մարմարիոնի վրայ քանդակուած պատկերը կայ, ասոր վրան Լատինաց պատկերը՝ պատկն կախուած, և հարաւային կողմի պատին վրայ կախուած «Ս. Յարութեան» պատկերն ալ Հայոցն է։

Ս. Գերեզմանի վրայ մատուցուած թէ հանդիսաւոր պատարագներու և թէ ամենօրեայ Ս. Պատարագի ժամանակ վերաբերումն կը դնենք միշտ «Հրեշտակի վիմին» վրայ։

Այս տեղւոյն հարաւային և հիւսիսային անկիւններն երկու հատ բոլորշի լուսամուտներ կան, ուրկէ կը տրուի «Լուսաւորեան» հարաւային կողմն Հայոց Լուսահան վարդապետն, հիւսիսային կողմէն Յունաց Լուսահանն։

Ս. Գերեզմանին ներքին՝ այսինքն երկրորդ մասն սակաւ ինչ խոնարհ է քան զարտաքինն, և այս մասին դրան ճակատն, աջ ու ձախ կողմերն, մարմարիոնի վրայ դեղեցիկ քանդակներով յօրինուած է։ Ներքին մասը թէ լայնութեամբ և թէ երկայնութեամբ դրեթէ երկու մեթրի չափ է։ Քրիստոսի Տեառն մերոյ բուն գերեզմանը այս երկրորդ մասին մէջ հիւսիսային կողմն է ժայռին մէջ փորուած որոյ կողերն և վրայի կողմը ճերմակ մարմարիոնով ծածկուած են, և որոյ երկայնութիւնն 10, լայնութիւնն 5 և բարձրութիւնն 3 թզչափ է։ Ո՛վ ոք ներս կը մտնէ, բնականէն մնացեալ բան մը չտեսնէր։ Բայց ի մարմարէ, պատկերներէ և կանթեղներէ, և սակայն զգուշութեամբ դիտողին դեռ կը տեսնուին, չըջապատին մարմարներուս տակ բուն գերեզմանի բնական ժայռ քարերն, զորս Դչմայն Հեղինէ տաշել և կոկել տուած էր։

Հոս եւս 43 հատ կանթեղներ կան առաստաղէն կախուած, որք կը վառին մշտապէս, և որոյ 13 ական հատը՝ Հայոյ, Յունաց և Լատինաց են, իսկ մնացեալ 4 հատը Պօղոսց։

Ինչպէս ըսինք Ս. Գերեզմանը սոյն տեղւոյն հիւսիսային կողմն է, այս կողմն՝ Ս. Գերեզմանին վրան, երեք մասի բաժնուած է, մէջտեղն Յունաց՝ ուր մարմարիոնէ քանդակուած Յարութեան պատկեր մ՚ունին։ Սոյն պատկերն ի հնումն երեք ազգաց կը վերաբերէր, որուն առջեւը Յոյներն ունէին ուրիշ չարժական պատկեր մը, բայց յետոյ խորհրդանիշ վոխեցին պատկերն և աւելի վոքր մը դրին, և հետզհետէ աւելի վոքրներ դնելով վերջապէս օր մը բոլորովին վերուցին, և յիշեալ մարմա-

բիոնի վրայ քանդակուած պատկերն իրենց յատկացուցին։ Հայոց բաժինն է ալ կողմինը «Յանոտից» կողմը, ուր ունին մի պատկեր «Յարութեան» կտաւի վրայ նկարուած։ Լատինաց բաժինն է ձախ կողմինը «Մնարից» կողմը, ուր ունին արծաթաճոյղ պատկեր մը «Յարութեան»։ Երեք ազգերն ալ իրենց պատկերներուն առջեւ ունին վեց վեց աշտանակ և չորսական ծաղկաման, որք միշտընջենական կերպիւ կը մնան հոն։ Երեք ազգաց մէյմէկ աշտանակներն միշտաւառ են։ Մեր հանդիսաւոր թափորներուն, Պատարագներու, և Հրաշալաւոր ժամանակ մեր աշտանակներն ամբողջ, իսկ Յունաց և Լատինաց աշտանակներէն երկերկու ղոգ սկիզբէն ցվերջ կը վառին։ Մի և նոյն սովորութիւնը ունին անոնք մի և նոյն յարգանքը կը տարուի նաեւ մեր կողմէն նոցա հանդէսներուն ժամանակ։

Ս. Գերեզմանին մէջ արեւմտեան կողմի պատին վրայ պահարան մը կայ առանց փականքի, տախտակեայ փեղկով և վրան Յունական պատկերով, ուր երեք ազգաց կողմէն կը դրուին Ս. Գերեզմանը մաքրելու քերիչ, աւել, ըսպունդ և այլն։ Այս պահարանին առաջը կը կայնի Յունաց լուսարարը մոմ վաճառելու համար իրենց ուխտաւորաց, երբ Ս. Յարութեան մեծ օրուան բաց ըլլայ, և ուրիշ ազգ Ս. Գերեզմանին վրայ Պատարագ կամ որ և իցէ արարողութիւն մը չունենայ։ Մեր հանդիսի, թափօրի ալյլն ժամանակ եւս մինչեւ մեծ դրան փակումը իրաւունք չունի գերեզման գալով մոմ վաճառելու։ Ս. Գերեզմանին մէջ այս կերպիւ մոմ վաճառելու սովորութիւնը չունինք ոչ մենք և ոչ ալ Լատինք, բայց մեր Պատարագին վերջին ժամանակներն մեր լուսարարն «Թաղախ» և մոմ կը դնէ։

ՏՐԴԱՏ ՎՐԴՊՏ. ՊԱԼԵԱՆ

(Շարունակելի)

ԼՈՒԾՈՒՄՆ 11ՐԴ ԽՆԴՐՈՅ

x կոչենք չհլերուն թիւը, որ ատեն իւրաքանչիւրն կ'արժէ $\frac{60}{x}$ ֆրանք, եթէ միւնոյն դնով 3 չհլ աւելի գնէր. այն ատեն իւրաքանչիւրն. իւր առածէն 1 ֆրանք նուազ պիտի արժէր, ուստի կ'ունենանք

$$\frac{60}{x} - 1 = \frac{60}{x+3}$$

Հաւասարութիւնն զոր ամփոփելով

$$x^2 + 3x = 180$$

եւ սա ըստ օրինի լուծելով կը գտնենք.

$$x = 12$$

Ուրեմն 12 չհլ է եղեր գնածը. որոյ իւրաքանչիւրն 5 ֆրանք կարժէ. եթէ $12 + 3$, այսինքն 15 հատ գնէր այն ատեն իւրաքանչիւրն պիտի արժէր 4 ֆրանք՝ իւր առածէն 1 ֆրանք պակաս։

Աշուաւիք յունդոդաց

Սզն. Պ. Գարեգին Մ. Գրամեան Մարզբեան։

12ՐԴ խնդրոյ համար ճիշդ լուծում մը հասած չըլլալով, կը թողունք լուծման հրատարակումը. ճիշտ լուծման մը գալըստեան սպասելով։

ԽՆԴԻՐ 13Ր

Ծանօթ ըլլալով

Ա. Բ Գ. եռանկեան Ա. անկիւնը, բարձրութիւնը, և միջագծայն (médiane), գտնել նոյն եռանկեան երեք կողմերն, և երկու անկիւններն։

Սկիւտար ՎԱԶԻ

ԽՆԴԻՐ 14ՐԴ

Մարդ մը կուզէ քանի մը կտոր գիրք գնել, բայց եթէ իւր ունեցած դրամին

այդ դրքերուն ոսկեզօծ կազմուածներէն առնէ, այն ատեն 18 ֆրանք կը պակսի իրեն, իսկ եթէ թղթակազմներէն առնէ, իւր ունեցածին կէսն միայն պիտի վճարէ։ Մարդն կ'որոշէ իւր ունեցած դրամին համեմատ երկու տեսակէն խառն գնել։

Սրդ՝ կուզենք գիտնալ թէ՝ դրքերն քանի՛ հատ են, մարդը քանի՞ ֆրանք ունի. ի՞նչ է իւրաքանչիւր տեսակին գինը. և իւրաքանչիւր տեսակէն քանի՞կան հատ պարտի առնել, գիտնալով որ 2 ոսկեզօծ կազմուածի դին 5 թղթակազմի գնոյն համարժէք է, և դրքերուն թիւը իւր ունեցած դրամին $\frac{1}{8}$ ին կը համապատասխանէ։

(Սոյն խնդիրն Պէյհիքեանց Մաքրուհեան երևեռ վարժարանի բարձրագոյն կարգի մանչ աղայոց գրահաշուոյ հարցաքննութեան առաջարկուած է, զոր կրցած է լուծել նոյն կարգի յառաջադէմ աշակերտներէն Պ. Արշակ Հ. Ասլանեան։)

ԼՈՒԾՈՒՄՆ ԹԻՒ **15** ՀԱՆԵԼՈՒԿԻ

ՕՐԻՆԱԿ (Գործնական օրէնքի)

ՕՐԻՆՅԱԿ (Գետ մը Ամերիկայ)։

Զոր լուծեց, Միհրան Էֆ. Քիւրքճեան Սամսօն։ Հայկ Կ. Կիւլլէնկեան Մարզուան։

ԼՈՒԾՈՒՄՆ ԹԻՒ **16** ՀԱՆԵԼՈՒԿԻ
Ա. Մ. Պ.

Զոր լուծեցին. 1. Միհրան Էֆէնտի Քիւրքճեան, Սամսօն։ — 2 Գարեգին Մ. Գրաճեան, Մարզուան, Անաթօլիա գոլէճ։ — 3 Մարտիրոս Ն. Արայճեան, Տումգարու։ — 4 Հայկ Կ. Կիւլլէնկեան Մարզուան։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌՁԵՌՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԵՆԷ Ի ԴԱՂԴԻԵՐԷՆ

(Յաշխարհիկ լեզուէ)

ԱՇԽԱՏԱՍԻՐԱՑ

ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆ

Սոյն երկլեզուեան Բառարան՝ որ կը պարունակէ 30000/ մօտ բառ, աւարտած լինելով՝ կազմեալ կը վաճառի մայրաքաղաքիս բոլոր Հայ գրավաճառաց քով, ի դին մէկ արծաթ մէճիտ։

Շատ գնողաց գոհացուցիչ զեղչ կ'լինի։ Վաճառման կեդրոնատեղին է հանդիսիս տպարանն։

ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻ
ՊԱՆԴՈԿԸ

Թարգմանիչ — ԳՐԻԳՈՐ Կ. ՏԻԼՊԷՐ

Հրատարակիչ - ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Սոյն սքանչելի եւ բարոյալից վէպն, որ յատկապէս մանկանց համար չինուած է, նամաւանդ թարգմանուած, մաքուր տպագրութեամբ եւ գեղեցիկ պատկերներով զարդարուն, արդարեւ արժանի է մանկանց տրուելու իբր օգտակար եւ արդիւնաւոր գիրք մը։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ — ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Տպագր. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ — Պոլիս, Էսքի Զապրիէ ճատտեսի, թիւ **63**

ԹՇՈՒԱՌՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Թարգմանիչ ԳՐԻԳՈՐ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Հրատարակիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Ի լոյս ընծայուեցաւ ։ Գինն է 14 դրչ։ Հինգ հատորն ի միասին 50 դրչ։ Դիմել հանդիսիս տպարանը ։ Պօլիս , Էսկի Զապթիէ ճամուէսի թիւ 63 ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ցօրինեց — Մ. ԱՍԷՆ

—

ՏԸՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հասարակ և տասնորդական կոտորակներուն վրայ կարեւոր դիտելիքներ , բազմաթիւ բաղդատական ցուցակներով ներկայացած ընդհանուր ազգայ չափական դրութիւնները , փողերանոցի , սակարանի , կ. Պօլսոյ և Զմիւռնիոյ առեւտրական և հաշուական սովորութիւններ , նոյնպէս առեւտրական զանազան բազմաթիւ համեմատական գործողութիւններ լուծելու եղանակներն և անոնց ուղղութիւնը ճշդող փորձեր , մասնաւորապէս տոկոսաւոր ընթացիկ հաշուոց վրայ ընդարձակ բացատրութիւններ ալարունակող այն ընտիր և դիւրուսոյց Առեւտրականթուաբանութիւնն , որ եօթն մասերէ և 240 էջերէ բաղկացեալ է , առաջինն կրնայ համարուիլ իւր տեսակին մէջ , և որ ո՛չ միայն դպրոցներու , այլ նոյն իսկ առեւտրական հրապարակի վրայ հաշուական պաշտօնով դբաղող անձերու մեծապէս օգտակար կրնայ հանդիսանալ , հրատարակուեցաւ մեր տպարանէն ։

Կեդրոնատեղին է հանդիսիս խմբագրատունը և կը գտնուի ամէն Հայ գրավաճառաց քով ։ Գինն 12 դրուշ ։

ՄՕՆԹԷ ՔՐԻՍԹՕՑԻ ՈՐԴԻՆ

Դարբնոցասլեան և Թադուհոյն Մանեակի հրատարակիչ Ցարութիւն Քրիստափորեանի հրատարակած Մօնթէ-Քրիստօի որդւոյն երրորդ հատորն աւարտած և չորրորդ հատորին ալ ևս սկսած է ։

Այն ընտիր և հետաքրքրական վիպասանութեան երկու ամիս ու կէս առան մէջ կէս ըլլալը տեսնելուինս կը յուսանք թէ , միւս կէսն ալ նոյնպէս աւելի փութալ յառաջ սլիտի տարուի քիչ ժամանակուան մէջ աւարտելու համար ։

Մէն մի հատորոյ գինն է 10 դրուշ , իսկ դաւառաց համար 12 կանխիկ փոխարկի ծախիւք ։ Կը դտնուի Էսկի Զապթիէ փողոց Պէրպէրեան Տպարանը , և բոլոր դրավաճառաց քով , նաև Ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղաներուն քով ։

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Կը հրատարակուի տեսր տա տեսր 16 երեսէ բաղկացեալ 15 օրը միանգամ Տարեկան գինն է- կանխիկ 2 ոսկանի մէճիտ Պօլսոյ համար ։ — Գաւառաց համար 45 դահեկան ։ 4 բուրլի Ռուսաստանի համար ։ — Մէն մի տետրակին գինն է 100 փարայ ։

Խմբագրատպագրութեան տեղերն են՝ Կ. Պօլիս Էսկի Զապթիէ ճամուէսի , թիւ 63 . Բուրաստանի խմբագրատունը . — Կամուրջի գլուխ՝ Ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղայից խանութները ։

Ադրիանուպօլիս . — Ա. Ա. Էֆ. Սըվաճեան .
Աղեքսանդրիա . — Արժ. Ղեւոնդ Քհնյ. Փափազեան
Ատաթաղար . — Յովհ. Էֆ. Յարութիւնեան .
Գահիրէ . — Յառաջդիմասէր Ընկերութիւն .
Երզնկա . — Մեծ. Մինհրան Էֆ. Ասատուրեան .
Զմիւռնիա . — Պ. Հրանտ Մ. Մամուրեան .
Թիֆլիզ . — Մեծ. խմբ. Ադրիւր Հանդիսի .
Մանիսա . — Մկրտիչ Էֆ. Դերձակեան .
Մարսուան . — Յ. Թ. Էֆ. Գայտեան .
Նիկոմիդիա . — Յակոբ Էֆ. Տէր Ազարեան .
Ռօտոսթոյ . — Ռուբէն Էֆ. Գալանճեան .
Սամսօն . — Մինհրան Էֆ. Քիւրքճեան .
Սերաստիա . — Նշան Էֆ. Թոհմիզճեան .
Սիմֆերօբօլ . — Արժ. Օգսենտիոս Քհնյ. Կոպչակճեան .
Տրապիզոն . — Նշան Էֆ. Գալայճեան .
Օրտու . — Գէորգ Էֆ. Կիւլեան .